

ՀՈՒԶԱՐՏԱՅԱՅՏՉԱԿԱՆ VS ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ  
ԱՐՉԱԿԻ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ  
(անգլերեն նյութի հիման վրա)

Մարդկային մտածողության պրոցեսի երկու ուղղությունների՝ տրամաբանական ճանաչողության և զգացմունքային ընկալման սկզբունքային տարբերությունը, մարդկային խոսքի երկակի բնույթն ընդհանրապես ելակետային և վճռորոշ է ցանկացած լեզվաոճական վերլուծության համար, քանի որ երկու հիմնական գործառական ոճերն էլ (զեղարվեստական, գիտական) վերաբերում են մարդկային խոսքին և ծառայում դրան: Լեզվի հիմնական գործառույթների (հաղորդման և ներգործման) իրացմամբ էլ պայմանավորված է լեզվաոճական վերլուծության մակարդակների (իմաստային, վերնշանային) առկայությունը: Բազմաթիվ հետազոտություններ արդեն ցույց են տվել, որ գործառական ոճերի բաժանումը չի կարող դիտվել որպես մեկընդմիջ տրված և քարացած: Նույնիսկ ոճական այնպիսի դրսևորումներում (գիտական ոճ, պաշտոնական-գործնական ոճ և այլն), որոնք հիմնված են զուտ փաստագրական տեղեկությունների վրա, քիչ չեն այն դեպքերը, երբ հեղինակը դիմում է հուզարտահայտչական ու ոճավորված լեզվական միավորների գործածությանը՝ կարծես մի աստիճան բարձրանալով օբյեկտիվ իրականության զուտ փաստական ճանաչողության մակարդակից: Ասվածից հետևում է, որ որքան էլ գործառական ոճերը հակադրվեն միմյանց, իրական խոսքաստեղծման պրոցեսում դրանք գտնվում են մշտական փոխազդեցության ու փոխներթափանցման հարաբերություններում, սակայն այդ փոխկապվածությունը փոփոխական է կախված կոնկրետ նյութի ոճական ուղղվածությունից: Լեզվաոճական վերլուծության խնդիրն է պարզել, թե ո՞ր գործառական ոճին է պատկանում շարադրված նյութը, ո՞ր մակարդակով պետք է ընթանա վերլուծությունը (իմաստային թե՞ վերնշանային), որը թույլ է տալիս առանձնացնել հաղորդման և ներգործման գործառական տարրերը տվյալ խոսքային ոճին պատկանող շարադրանքում, համեմատել և հակադրել դրանց ոճական հատկանիշները: Համեմատման միջոցով առանձնացվում են լեզվական արտահայտման երկու բևեռներում գտնվող հակասական երևույթները, քննարկվում են բևեռացված տարրերի լեզվաոճական առանձնահատկությունները, բացահայտվում է այն հատուկ խոսքային մթնոլորտը, որ ստեղծվում է այդ տարրերի հարաբերակցությունից: Չնայած երկու հիմնական հաղորդման և ներգործման գործառույթների հակադրմանը, դրանց միջև գոյություն չունի անաստան անջրպետ:

Այդ հակադրությունը պայմանական բնույթ ունի, քանի որ մարդկային խոսքում լեզվի բոլոր տարրերը գտնվում են անընդհատ փոխադարձ կապի մեջ: Այդ կապը իրականանում է բազմազան ձևերով: Մի դեպքում խոսքի հիմքում գերակշռող չափով ընկած է տեղեկատվական (informative) ոճը,<sup>1</sup> հիմնված ինչ-որ բան հաղորդելու անհրաժեշտության վրա և հուզարտահայտչական տարրերը մղված են երկրորդ պլան, մյուս դեպքում գերակայում է գեղարվեստական ոճը, որն հիմնված է իրական աշխարհի բանաստեղծական ընկալման վրա և նպատակաուղղված է գեղագիտական ազդեցություն գործելու:<sup>2</sup> Լեզվաոճական վերլուծությունը, որի համընդհանուր բնույթը թույլ է տալիս կիրառել այն վերոհիշյալ երկու դեպքերում էլ,<sup>3</sup> ուղղված է լեզվի և խոսքի հարաբերակցությունը բացահայտելուն և էապես կարևոր է տեղեկատվական բնույթի տեքստերի վերլուծության մեջ:

Ինչպես գործառական ցանկացած ոճի, այնպես էլ հրապարակախոսական արձակի ուսումնասիրությունը նպատակահարմար է սկսել երկու հիմնական գործառական ոճերի հակադրումից, որն առկա է հրապարակախոսական արձակի բոլոր ժանրային դրսևորումներում, որոնք էլ որպես այս կամ այն նպատակաուղղվածություն ունեցող գործառական համակարգեր իրենց ոճական առանձնահատկություններից ելնելով յուրովի են «թուլատրում» գործառական հակադիր բևեռների համագոյակցությունը: Հրապարակախոսական ոճը մնացած գործառական ոճերից տարբերվում է նրանով, որ այն ոչ թե օգտագործում, այլ գոյաբանորեն իսկ իր մեջ ներառում է հաղորդման և ներգործման գործառույթները: Այս դիալեկտիկական հակադրամիասնությամբ է ստեղծվում այն ոճական միջավայրը, որը նպատակաուղղված է դրսևորելու հեղինակի դիրքորոշումը հասարակական, քաղաքական, սոցիալական երևույթների ներկայացման ու գնահատման մեջ: Հրապարակախոսական ոճի «միս ու արյուն» հանդիսացող երկու գործառույթներից ցանկացածի բացակայության դեպքում ոճը չի կայանա:

"...I do not think we can foretell how large the future population of the world is likely to be. Obviously, the increase must stop sometime and somewhere. About eight centuries more of increase at the same rate would see **the inhabitants of England packed like sardines** - there would literally be standing room only." (Sir James Jeans, p. 16)

"The first purpose of the show is to make life acceptable and pleasant. This attitude can largely be explained by the circumstances of history: four active volcanoes; floods; and earthquakes; as well as continuous invasions by outsiders. All have created a sense of insecurity. Italians tend to **make life's dull and insignificant moments exciting and significant by decorating and ritualizing them. Ugly things must be hidden. Unpleasant and tragic facts are swept under the carpet whenever possible; and ordinary transactions are embellished to make them more stimulating.** Italians prefer

to glide elegantly over the surface and leave the depths unplumbed.” (M. J. Gannon, p. 44)

Առաջին հատվածում, որտեղ հեղինակի առաջնահերթ խնդիրը ժողովրդագրական փաստեր հաղորդելն է, ակնհայտորեն գեղարվեստական արտահայտչամիջոցը՝ “packed like sardines” համեմատությունը հեղինակի կողմից գործածվել է ճանաչողական (cognitive) գործառույթի իրացման նպատակով մարդկությանը հուզող կարևոր խնդրի վերաբերյալ տեղեկություն տալուն ուղղված չեզոք շարադրանքի ազդեցությունը ուժեղացնելու համար: Համեմատությանը նախորդող մտքերն արդեն իսկ պարզորոշ ներկայացնում են խնդիրը, ուստի եթե այդ տեքստից համենք հուզարտահայտչական տարրը համեմատությունը, տեղեկություն հաղորդելու գործառական նպատակաուղղվածությունը միևնույն է կապահպանվի:

Եթե փորձելու լինենք երկրորդ համատեքստը զրկել տեղեկատվական գործառույթ իրացնող four active volcanoes; floods; and earthquakes; as well as continuous invasions by outsiders տարրերից, ապա հաջորդող մտքերը, որոնք ներկայացված են ոճավորված միավորներով, կդառնան անիմաստ: Մյուս կողմից, եթե վերջիններս բացառենք համատեքստից, ապա ներգործման գործառույթը այն աստիճանի կխաթարվի, որ դժվար կլինի բացատրել, թե ո՞րն է այդ տեղեկությունները հաղորդելու նպատակը:

Այսպիսով, կարելի է ասել, որ բոլոր հրապարակախոսական տեքստերում առկա է հաղորդման (իրականության տրամաբանական ներկայացում) և ներգործման (գեղարվեստական մտածողության դրսևորում) գործառական տարրերի բարդ համակցում,<sup>4</sup> մտածողական և հուզական բաղադրիչների անբաժանելի կապ: Երկու հիմնական գործառական ոճերի փոխազդեցությունը հրապարակախոսական ոճում ընթանում է անընդհատ, կանոնավոր, համաձույլ երբեմն կարծես հետապնդելով զուտ տեղեկատվական նպատակ, երբեմն էլ գրողի անհատականության շնորհիվ շարադրվելով ոճական մեծ վարպետությամբ, հեղինակային վառ երանգավորված խոսքով միտված ազդելու ընթերցողի հույզերի և զգացմունքների վրա: Այդ է պատճառը, որ հստակ, ճշգրիտ ու միանշանակ գաղափարների կողքին, որոնք հրապարակախոսական շարադրանքում արտահայտվում են որոշակի լեզվական կաղապարներով, առկա են նաև այնպիսի միավորներ, որոնց հասկացումը պահանջում է ներըմբռնում ու երևակայական ընկալում: Եվ իրոք, մասնագիտական մղում ունեցող հրապարակախոսը օժտված է օբյեկտիվ իրականությունը ստեղծագործական մեծ ուժով ներկայացնելու հատկությամբ: Եթե գիտնականը տուրք է տալիս փաստագրական տեղեկություններին ու մտածողական դատողություններին, իսկ գեղարվեստական երկի հեղինակը իր երևակայական հորինվածքով նպատակադրվում գեղագիտական հաճույք պատճառել իր ընթերցողին, ապա հրապարակախոսից պահանջվում է օբյեկտիվ փաստերը յուրովի մեկնաբա-

նելու, գնահատելու և ընթերցողին իր դիրքորոշման մեջ համոզելու բացառիկ ունակություն: Ու թեև գեղարվեստական մեծ վարպետությամբ գրված հրապարակախոսական ստեղծագործությունը երբեմն շատ մեծ հուզական ազդեցություն կարող է թողնել, այդուհանդերձ այն ներկայանում է որպես հաղորդման և ներգործման գործառույթների խառնաշերտ, որն ուղղված է լուծելու որոշակի հասարակական խնդիրներ:

Վերը շարադրվածից հետևում է, որ ուսումնասիրել հրապարակախոսական ոճը նշանակում է հաղորդման և ներգործման գործառույթների հակադրման միջոցով հետազոտել լեզվի գործառույթյան օրենքները, բացահայտել բնորոշ խոսքային կառույցներն ու դրանց առանձնահատկությունները, ոճական ներթափանցումները, ինչպես նաև արտալեզվականի և ներլեզվականի արտահայտման ձևերը: Բնության միջոցը, որը հնարավոր է դարձնում բացահայտել լեզվական միավորների գործունեության օրենքներն այդ ոճում, նախ և առաջ ոճագործառական է: Դա նշանակում է, որ առավել կարևոր են ոճական համեմատությունները, որոնք բացահայտում են խոսքային առանձնահատկություններն ու այլ գործառական ոճերին պատկանող լեզվական միավորների փոխհարաբերության և փոխկապվածության խնդիրները: Դենց այդ կապի միջոցով են դրսևորվում հրապարակախոսական գործառական հատկանիշները՝ հիմնված այն արտալեզվական գործոնների վրա, որոնք էլ պայմանավորում են լեզվական միավորների ընտրությունը: Սիւնույն ժամանակ ակնհայտ է դառնում, թե որքանով է այդ ոճին պատկանող տեքստը իրականացնում հաղորդակցման ուղորտում իր առջև դրած նպատակը: Հրապարակախոսական գործառական նպատակաուղղվածություն ունեցող տեքստերում հաղորդման և ներգործման գործառույթներն իրացնող տարրերի փոխկապվածությունը ընդգրկում է բոլոր մակարդակների լեզվական միավորները: Այդ լեզվական միավորներն իրենց հերթին գործառական իմաստ են ձեռք բերում միայն տվյալ խոսքային համակարգում որպես այդ համակարգի տարր օգտագործվելիս: Այլ համակարգերում նրանք փոխակերպվում են, քանի որ կատարում են այլ գործառական հանձնարարություն: Այսպիսի փոխակերպման պատճառը կոնկրետ արտալեզվական գործոններն են կամ այդ գործոնների համակարգը: Հրապարակախոսական ոճական բնութագիրը հիմնված է լեզվի տարբեր մակարդակների (ձևաբանական, շարահյուսական, բառագիտական, հնչյունաբանական, ոճական) գործառական-ոճական տարրերի համակցման վրա: Այդպիսի լեզվական տարրերի ուսումնասիրման դժվարությունն այն է, որ դրանք ոչ միայն հակադրվում, այլև համադրվում են, ուստի կարևոր է մանրակրկիտ ուսումնասիրությամբ պարզաբանել, թե ի՞նչ չափով են արտահայտվում փոխներթափանցումները:

Ինչպես արդեն նշել ենք, հրապարակախոսական ոճի կայացման և նրա գործառական ուսումնասիրության միջոց է հաղորդում-ներգործում հակադրությունը, որը ներկայանում է մի շարք ածանցյալ հակադրությունների միջոցով: <sup>5</sup>

Հրապարակախոսական արձակի համար հատկապես կարևոր են օբյեկտիվ-սուբյեկտիվ, տրամաբանական - հուզական, գրքային (գրավոր) - խոսակցական (բանավոր), ուղղակի - փոխաբերական, իրական (փաստագրական) - ոչ իրական (երևակայական) (factive - fictive) հակադրությունների խմբերը: Թե այս հակադրություններից ո՞րն է առաջնային հրապարակախոսական արձակի համար, կախված է հետազոտվող նյութի ժանրային պատկանելությունից: Գլխավոր հակադրության այս կոնկրետ դրսևորումները հրապարակախոսական արձակում վկայում են, որ ոճականորեն նշույթավորված բառային-ձևաբանական և շարահյուսական միջոցների ընտրության մեջ պատահականություններ լինել չեն կարող: Քննենք այդ հակադրություններն առանձին-առանձին:

Տրամաբանական - հուզական հակադրության միջոցով հեշտությամբ բացահայտվում են լեզվական ձևերի ոճական իմաստները, որոնք կապված են ճանաչողության որակական ոլորտների հետ և իրենց հիմքում ունեն հենց այդ և ոչ թե մի այլ հակադրություն: Տրամաբանական - հուզական հակադրությունը զգայուն է սոցիալական փոփոխությունների նկատմամբ, ուստի պատմական ժամանակաշրջաններից կախված կարող է դրսևորվել հուզականի և տրամաբանականի տարբեր համակցումներով: Սա էլ իր հերթին պայմանավորում է լեզվական միավորների ընտրությունը՝ դրանով իսկ նպաստելով օբյեկտիվ և սուբյեկտիվ հասկացություններ արտահայտող լեզվամիջոցների բևեռացմանը: Հաղորդման գործառույթի տրամաբանականությունն արտահայտվում է լեզվական միավորների կրկնվող գործածությամբ: Հուզականությունն (ներգործման գործառույթ), ընդհակառակը, կարևորում է լեզվական միջոցների արտահայտչականությունը, դարձվածայնությունը, կանոնարկված գործածության բացակայությունը: Տրամաբանականի և հուզականի դիալեկտիկան բնորոշ է անզլերեն հրապարակախոսական արձակի զարգացման բոլոր փուլերին և կարող է դիտվել որպես լեզվական միավորների մի կողմից կանոնավորության ձգտելու, մյուս կողմից՝ հուզարտահայտչական հատկանիշներ դրսևորելու հակադրություն:

"Like the water flowing through a Japanese garden, Japanese society is fluid and changing while retaining its essential character. Alone each droplet has little force, but when combined with many others, it has enough force to form a waterfall, which cascades into a small pond filled with carp. The pond appears calm, yet beneath the surface a pump constantly recirculates water back to the top of the waterfall. Undoubtedly, the scene is designed to replicate nature and to capture its true essence, and the sound of the gently flowing water amid this small recreation of beauty evokes a feeling of harmony, oneness

with nature and even timelessness. The garden itself serves as a reminder of the centrality of nature to the development of Japanese society, religion, art, and aesthetics: not just nature but the way in which the Japanese perceive nature. Just as the garden is part of nature, the Japanese tend to view themselves as integral with it. In contrast to the western view of nature as something to be confronted and subdued, they generally see it as something to be accepted.” (M. J. Gannon, p.254)

Բերված հատվածի առաջին երկու նախադասությունները, համեմատելով Ճապոնական հասարակությունն այգու միջով հոսող ջրի հետ, ներկայացնում են դրա անընդհատ փոփոխվող, բայց իր էությանը հավատարիմ և համախմբված բնույթը: Վարպետորեն ձևավորված այդ այգու նպատակը բնությունը կրկնօրինակելու և այդ ձևով նրա էությունը բացահայտելու փորձ է: Բացի այդ այն առաջացնում է բնության հետ միաձուլվելու, ներդաշնակության, հավերժության զգացումներ: Այգին խորհրդանշում է բնության անբաժանելի մաս կազմող Ճապոնական հասարակությունը, կրոնը, արվեստը, գեղագիտությունը: Բնության այսպիսի ընկալումը լիովին տարբերվում է արևմտյան այն տեսակետից, ըստ որի բնությունը պետք է ենթարկվի մարդուն: Այստեղից էլ Ճապոնական հասարակության յուրօրինակությունն ու եզակիությունը:

Հատվածի քննությունից պարզվում է, որ տրամաբանականի և հուզականի դրսևորումն այստեղ հետաքրքիր միաձուլումներ է առաջացրել: Եվ քանի որ մտածողության տրամաբանական ձևերի և փաստերի նկատմամբ հուզական մոտեցման հատկանիշը անպայմանական (կատեգորիկ) չէ, հուզարտահայտչական տարրերն ազատորեն մուտք են գործում հեղինակի (հետագայում նաև ընթերցողի) տրամաբանական մտածողության մեջ: Հուզական վառ զուսավորում ունեցող բաներն ու բառակապակցությունները fluid society, to replicate nature, to capture its true essence, the sound of gently flowing water evokes a feeling of harmony, oneness with nature, timelessness, to perceive nature, ներթափանցելով հրապարակախոսական նպատակաուղղվածություն ունեցող կանոնավոր լեզվական կառույցներ, որոշ չափով չեզոքացնում են (տրամաբանական - հուզական հակադրության սահմաններում): Այդ տարրերի չեզոքացումն այս հատվածում արտահայտվում է լեզվական միավորների հուզարտահայտչական իմաստի մասնակի կորստով, քանի որ դրանք ծառայում են Ճապոնական հասարակության վերաբերյալ տրամաբանական տեղեկություններ հաղորդելու նպատակին: Մյուս կողմից society, droplet, combine, waterfall, cascade, pond, carp, pump, recirculate, centrality, integral, confront ոճական չեզոք միավորներն ու եզրույթները՝ կազմելով ոճական փոխաբերություններ և համեմատություններ, ոճականորեն լիցքավորվել են և ձեռք են բերել լրացուցիչ իմաստներ: Նույնիսկ ամբողջ հատվածը կարելի է որակել որպես ընդլայնված փոխաբերություն: Եթե սահմանափակվենք այս հորիզոնական համատեքստի օրինակով, թերևս կարող է անգամ այն թյուր տպավորությունը ստեղծվել, որ ոճավորված

միավորներն ու հուզականորեն հագեցած նյութը գեղագիտական ներգործման գործառույթ են կատարում. այնինչ ավելի լայն համատեքստի քննությունը միշտ բերում է այն համոզման, որ այդ բոլոր միավորները, այնուամենայնիվ, միտված են հաղորդելու օբյեկտիվ և տրամաբանական տեղեկություններ ճապոնական հասարակության և մշակույթի վերաբերյալ: Ընդ որում օբյեկտիվությունն ընկած է սուբյեկտիվ նպատկությունների հիմքում: Ուրիշ խոսքով, պարզաբանելով կապը նյութական աշխարհի հետ, գնահատելով երևույթների էությունը, հեղինակն արտահայտում է իր սեփական սուբյեկտիվ վերաբերմունքը, որի վերջնական արդյունքը, այդուհանդերձ, տրամաբանական է, քանի որ առաջանում է որպես մարդու ճանաչողական մտավոր գործունեության արդյունք և ուղղված է նրա ու հասարակության մյուս անդամների ճանաչողական հետաքրքրությունները բավարարելուն: Հրապարակախոսական արձակում տրամաբանական տարրերի առկայությունը զուգակցված հուզական տարրերի հետ, առաջացնում է որոշակի գործառական նպատակաուղղվածություն ունեցող ոճական միջավայր: Տրամաբանական - հուզական հակադրությունը լայն առումով կարևոր արտալեզվական գործոն է հրապարակախոսական ոճում. քանի որ այն կարողանում է ստեղծել այնպիսի միջավայր, որն անկախ ժանրային պատկանելությունից միանգամից ընկալվում է որպես հրապարակախոսական:

Գրքային և խոսակցականի համագործակցությունը<sup>6</sup> անգլերեն հրապարակախոսության մեջ առանձնապես կարևորվում է նրանով, որ հրապարակախոսական գրքային լեզուն հարստանալով կենցաղային խոսքի մասնակիորեն չեզոքացված տարրերով, այդ հարստությունը պարտաճանաչ ձևով վերադարձնում է հասարակությանը: Խոսակցական (բանավոր) լեզվի բոլոր երևույթներն ու տարրերն ունեն հրապարակախոսական գրավոր խոսք թափանցելու ընդունակություն: Ընդ որում զուգակցվելով գրքային տարրերի հետ, հրապարակախոսական արձակում դրանք առաջացնում են շատ հետաքրքիր միաձուլումներ:

"There is an aspect of my fiction that relates to **thus-and-thus**. He didn't notice any switch in my English. ...And when the doctor finally called her doctor - **lo and behold** - we had assurances the CAT scan would be found." (Amy Tan, p. 54)

"So **the story went** and he fell in love with the town postman, a poor but talented man, able to play any musical instrument **he laid eyes on**. So in the middle of one night - and then **came the line** I always waited for with a thrill of pleasure - she **ran off** with him in her shift." (Elizabeth Stone, p. 21)

"When the congregation grew still, he proclaimed in ringing tones that negroes should always **scratch each other's backs**. ...After one month of marriage she found his two **brats** a nuisance and small-town life a bore." (Lindsay Paterson, p.42.)



Բանավոր-խոսակցական խոսքի այս և շատ այլ միավորների (ready-mades, never crossed my mind, buddy, perk, puff away, hillbilly, ticky-tacky, gotten, lousy information, to get into a moony mood, to turn on the imagination, to be in one's shoes, to be nothing much) թափանցումը հրապարակախոսական արձակ (մանավանդ խոհագրությունների ժանր) պայմանավորված է դրանց արտալեզվական ծագմամբ: Այդ ներթափանցումներն ընթանում են պլանավորված ձևով և ոչ թե տարերայնորեն կամ պատահաբար: Այդ մասին է վկայում որոշակի գուգորդումներ առաջացնելու համար խոսակցական տարրերի պարբերաբար գործածման շնորհիվ առաջացած գործառական ուղղվածությունը:

Փոխաբերական - ուղղակի իմաստների ոճական հակադրությունը հրապարակախոսական արձակում արտահայտվում է յուրահատուկ միջավայրում: Այդպիսի միջավայրի ստեղծումը հրապարակախոսական ոճի պահանջն է: Ճշգրիտ, ոչ երկիմաստ, լրացուցիչ առնչանակային երանգների նկատմամբ քիչ կամ ընդհանրապես հակում չունեցող կառույցների օգտագործումը նպաստում է այնպիսի փոխաբերությունների ստեղծմանը, որոնց գեղագիտական և հուզական հատկանիշները այս կամ այն չափով չեզոքացված են այսինքն, հրապարակախոսական ոճը փոխաբերությունն օգտագործում է առատորեն, բայց որոշակիորեն «հրապարակախոսականացված»: Նույնիսկ փոխաբերական առումով խիստ հագեցած տեքստերի վերջնական նպատակն, այնուամենայնիվ մնում է տեղեկատվական-ճանաչողականը: Գեղարվեստական փաստագրական ժանրերում շատ տարածված է ընլայնված (extended) փոխաբերությունը: Զննենք այն հետևյալ համատեքստում

“All the outward events were only visible signs of a great motive power that grew from within; of the reassertion of Nature, and of her rights, against ascetism; of the disinterested desire for knowledge for its own sake - not the Schoolman's desire for logical results, or that of the alchemist who regarded science as a means to find the philosopher's stone, but for something far wider. Rabelais' giant baby, Prince Gargantua, born in the open air, waking to life, parched with thirst and calling loudly for drink, must have been a conscious symbol of the child of Renaissance, who came forth into the world unswaddled, and athirst, to drink deep and grow, strong enough for the overturning of false barriers, and the reinstatement of those senses which religion had taught him to condemn. Beauty was manifested to man afresh - beauty and joy which he had learnt to regard deadly foes of Christianity.” (Edith Sichel, p.67)

Բերված հատվածի առաջին բարդ ընդարձակ նախադասությամբ ներկայացվում է այն բնական ներքին մղիչ ուժը, որը հակադրվելով կյանքում, գիտության ու կրթության մեջ տեղ գտած խիստ և քարացած կանոններին ու մտածելակերպին, Վերածննդի դարաշրջանի հիմքը դարձավ: Ուրբեի ազատության մեջ ծնված նորածին հսկա մանուկը կապանքներից ազատվելու այդ ներքին ուժի մարմնավորումն է, Վերածննդի խորհրդանիշը: Նա ծնվեց ազատ,



անհագ ծարավով, արագ մեծանալու կատաղի մոլուցքով, որպեսզի կարողանա խորտակել կեղծ արգելապատնեշները, վերահաստատել կրոնի կողմից դատապարտվող մարդու զգայականը կարևորող նոր գաղափարախոսությունը: Վերահայտնվեց գեղեցկությունը, գեղեցկությունն ու երջանկությունը, որոնք համարվում էին քրիստոնեության ամենակատաղի բշնամիները:

Այս հատվածի լեզվաոճական վերլուծությամբ հեշտությամբ բացահայտվում է փոխաբերական-ուղղակի հակադրությունը: Չեզոք բառակապակցությունների, բառերի ու եզրույթների (logical results, religion had taught, ascetism, knowledge, schoolman, alchemist, symbol, science, Christianity, world, to condemn) իմաստները ուղղակի են: Փոխաբերական են ոչ միայն ոճական վառ նրբերանգներով արտահայտվող բառակապակցությունները՝ great motive power that grew from within: the reassertion of Nature, and of her rights, the disinterested desire for knowledge for its own sake, something far wider, Rabelais' giant baby, Prince Gargantua, born in the open air, wakening to life, parched with thirst and calling loudly for drink, a conscious symbol of the child of Renaissance, came forth into the world unswaddled, and athirst, strong enough for the overturning of false barriers, the reinstatement of those senses which religion had taught him to condemn, beauty was manifested to man afresh, deadly foes of Christianity, այլև ամբողջ հատվածն ընդգրկող ընդլայնված փոխաբերությունը, որի յուրօրինակությունը, արտահայտչականությունն ու վառ սուբյեկտվ բնույթն, այդուհանդերձ սահմանափակվում է Վերածննդի դարաշրջանի վերաբերյալ տեղեկություններ տալու ուղղակի նպատակով:

Փոխաբերական արտահայտումները հրապարակախոսական ոճում ընդհանուր առմամբ մատչելի են, հեշտ ըմբռնելի, չեն առաջացնում տարաբնույթ զուգորդումներ՝ ինչպես գեղարվեստական ոճում, չեն շեղում ընթերցողին տրամաբանական և խոհական դիտարկումներ անելու նպատակից:

Երևակայական - փաստագրական (fictive-factive) հակադրության ակնհայտ օրինակներ են գեղարվեստական և գիտական ոճերը: Գեղարվեստական ոճը ներկայանում է անկրկնելի պատկերավորությամբ, մինչդեռ գիտական խոսքում փաստերն հանդես են գալիս գերակայության իրավունքով, քանի որ գիտական լեզուն իր գործառական նպատակաուղղվածության շնորհիվ գուրկ է գեղարվեստական ոճին բնորոշ գեղագիտական արժեքից: Հրապարակախոսական գործառական ոճն արտահայտվում է փաստագրական և երևակայական արժեք ունեցող լեզվական միջոցների նպատակաուղղված ընտրությամբ, որը սակայն չի հասնում այդպիսի միջոցների բացարձակ բևեռացման և անհամատեղելիության: Փաստերն հանդիսանում են հրապարակախոսական արձակի անբաժանելի մասը, այնպես, ինչպես գրքային բառապաշարը պաշտոնական-գործնական ոճինը, հնաբանությունը՝ պաշտամունքային խոսքինը, արտահայտչականությունը՝ գեղարվեստական խոսքինը, ստեղծելով տվյալ գործառական ոճին բնորոշ առանձնահատկություններ

համակարգ: Խոսքի այս ուրույն դրսևորման մեջ փաստագրական ուղղվածությունը բնորոշ է նրա բառա-ձևաբանական միավորներին, շարահյուսական կառույցներին, տեքստին ընդհանրապես: Ընդ որում փաստականության աստիճանն առավելապես բարձր է պատմա-փաստագրական վեպերում և ակնարկներում, որտեղ անակնկալ ու անսովոր լուծումներն անհրաժեշտություն չեն պատմական իրադարձություններ, պաշտոնական ու օրենսդրաիրավական դիտարկումներ ներկայացնելիս: Փաստականությունն այստեղ իրացվում է լեզվամիջոցների պահպանողական ընտրությամբ, ենթադրում է այնպիսի միավորների, կառույցների, լեզվական իրադրությունների կրկնություն, որոնք կարող են ապահովել գործառական կայունություն: Ընդ որում լեզվական միջոցների ընտրության մեջ մեծ տեղ է տրվում եզրույթներին, որոնք սովորաբար հիմնական, տրամաբանական իմաստով գործածվող բառեր ու բառակապակցություններ են: Հրապարակախոսական ոճում դրանք ոչ թե բուն գիտական հասկացությունների կրողներ են, այլև առավել ընդհանուր ուղղվածություն ունեն և միտված են բավարարելու հրապարակախոսի՝ հասարակական երևույթներն օբյեկտիվորեն ներկայացնելու պահանջն ու արտահայտելու այդ երևույթների նկատմամբ նրա տրամաբանական մոտեցումը: Անկախ հրապարակախոսական շարադրանքի հուզականության աստիճանից, միշտ էլ ակնհայտ է, որ եզրույթներն այստեղ ունեն իրենց կայուն տեղը և հանդես են գալիս որպես լեզվական համակարգի մաս: Այնուամենայնիվ, հրապարակախոսական արձակի բոլոր մակարդակներում հակադրվելով երևակայականությանը, եզրաբանական միավորները, ինչպես նաև ձևանմուշը (շաբլոն), դրոշմը (շտամպ), կաղապարը (կլիշե), որոնք լեզվական արտահայտությանը որոշակի կոնկրետություն ու հակիրճություն են հաղորդում, փոխում են իրենց նախնական գործառական ուղղվածությունը: Հրապարակախոսական միջավայրի գոյությունն ապահովող երկրորդ կարևոր գործոնը՝ երևակայականությունը, դրսևորվում է լեզվական միջոցների արտահայտչականությամբ, հուզական հագեցվածությամբ, լրացուցիչ առնշանակային իմաստների բազմազան նրբերանգներով: Այսպիսի գեղագիտական և հուզական հատկանիշներն, այնուամենայնիվ, փաստագրական տարրերին բնորոշ հատկանիշների հետ հարաբերության մեջ ստանում են նոր որակ և նոր գործառական բովանդակություն իրականացնելով ներգործման գործառույթը հաղորդման գործառույթի գերակայության միջավայրում: Այսպես՝

"Britain's guilt in leaving the Armenians unprotected was later recognized by Lloyd George; he noted in 1938 that, in the Treaty of Berlin, which "was acclaimed by us as a great British triumph, which brought "peace with honour", "Armenia was sacrificed on the triumphal altar we had erected. The Russians were forced to withdraw, the wretched Armenians were once more placed under the heel of their old masters". However, despite these high sentiments, it should be pointed out that during his

premiership in 1918 to 1920, Lloyd George did as little for the Armenians as any of his predecessors. He exhibited the **fatal tendency** of the British to **wring their hands at the fate of Armenians** but do nothing concrete in their behalf. Bit by bit Britain lost its position of predominance at the court of the Sultan. Reforms were never introduced into Turkish Armenia. And the Turkish court gravitated more and more towards the German capital of Berlin, where Bismark and later Kaiser Wilhelm II were proclaiming that "**Might is Right**". (Ch. J. Walker, p. 38)

Փաստականությամբ հազեցած այս համատեքստի գործառական ուղղվածությունը լիովին ակնհայտ է: Նույն բանը կարելի է ասել երևակայականության մասին, որն արտահայտվում է ոճական մեծ լիցք ունեցող բազմաթիվ դարձվածային բառակապակցություններում և ասույթներում: Այդ երկու բևեռների դիալեկտիկական հակադրամիասնությամբ ստեղծված միջավայրը ներկայացնում է տվյալ իրավիճակի նկատմամբ հեղինակային վերաբերմունքն ու գնահատանքը: Գործառական նպատակաուղղվածությունն առավելագույնս ակնհայտ է:

Ոճական վերոհիշյալ հակադրությունների քննությունը հրապարակախոսական տեքստերում ցույց է տալիս, որ այդ հակադրություններն իրացնող տարրերի գեղագիտական և արտահայտչական հատկանիշների մասնակի չեզոքացման հիմքի վրա գոյանում է բոլորովին այլ տեսակի պատկերավորություն, որի արդյունքում առաջանում է հրապարակախոսական նրբերանգ ունեցող միջավայր: Ոչ մի այլ ոճում հաղորդման և ներգործման գործառական տարրերի փոխհարաբերությունը չի հասնում այնպիսի խորության և ձեռք չի բերում ձևերի այնպիսի բազմազանություն, ինչպես այդ ոճում: Հրապարակախոսական ոճն իր սեփական սկզբունքներն է թելադրում գեղարվեստական արտահայտչականությանն ու տեղեկատվական տրամաբանականությանը: Իրոք, ժամանակակից անգլերեն հրապարակախոսական արձակի ոճի առանձնահատկություններից մեկը հակումն է դեպի արտահայտչականությունը և միևնույն ժամանակ դեպի կանոնարկվածությունը, այսինքն նոր, ուրույն «հրապարակախոսական արտահայտչականության» ստեղծումը:

Այսպիսով, անգլերեն հրապարակախոսական արձակի բառաձևաբանական տարրերի ու բառային-շարահյուսական միջոցների ոճական առանձնահատկությունների ուսումնասիրությունը բացահայտում և ներկայացնում է լեզվական հակադրամիասնությունների վրա հիմնված այդ գործառական ոճի յուրօրինակ բնույթը:

## Ծանոթագրություններ

1. Մ. Ս. Չակոբսկայան օգտագործում է հաղորդման և ներգործման գործառույթների համապատասխանող «հաղորդման ոճ» և «ներգործման ոճ» եզրույթները: (Чаковская М.С. Взаимодействие стилей научной и художественной литературы. М., 1990, с. 9)
2. Շ. Բալլին ճշգրտորեն ներկայացրել է այդ կապը, նշելով, որ կենդանի խոսքը իր արտահայտման բոլոր ձևերով ներկայացնում է մտավոր և զգացմունքային բևեռներ, որոնք հանդես են գալիս տարբեր որակներով կապված խոսողի հոգեվիճակի, որոշակի իրադրության և սոցիալական ոլորտի հետ: Մարդկային միտքը անընդհատ ծգտում է դեպի այս կամ այն բևեռը, երբեք էլ լիովին չհասնելով մեկին՝ որոշ դեպքերում ունենալով տրամաբանական կայունություն, — այլ դեպքերում զգացմունքայնություն: (Балли Ш. Французская стилистика. М., 1961, с.29)
3. Հարկ է նշել, որ գեղարվեստական ստեղծագործության քննության մեջ լեզվաոճական վերլուծության մեթոդը ընդամենը նախնական անհրաժեշտ և անխուսափելի փուլ է, որը նախորդում է լեզվաբանաստեղծական վերլուծությանը: (Гаспарян С.К., Лингвопоэтика образного сравнения, Е., 1991)
4. Հմմտ. Մ.Ն. Կոժինայի կողմից առաջարկվող կամք արտահայտող (волеятивная функция) և հույզ արտահայտող (эмотивная функция) գործառույթների հետ: (Кожина М.Н. К Основаниям функциональной стилистики. Пермь, 1968)
5. Մ. Ն. Կոժինան առաջարկում է այդպիսի հակադրությունների այնպիսի խմբեր, ինչպիսիք են՝ տրամաբանական - հուզական, գրքային (գրավոր) - խոսակցական (բանավոր), փոխաբերական - ուղղակի, օբյեկտիվ - սուբյեկտիվ, վերացական - կոնկրետ, ճշգրիտ - անորոշ, պաշտոնական - անկաշկանդ, կարճ (լակոնիկ) - բազմաբառ, հստակ (պարզ) - ոչ հստակ (աղոտ), անփոփոխ (ստատիկ) - հարաշարժ (դինամիկ) և այլն: (Кожина М.Н. О Речевой системности научного стиля сравнительно с некоторыми другими. Пермь, 1972, с. 79)
6. Ն. Ս. Ռազինկինան գտնում է, որ խոսակցականի և գրական-գրքայինի հակադրությունը որպես օրգանական ամբողջություն ինքնին ունի հուզարտահայտչական երանգավորում: (Разинкина Н.М. Стилистика английской научной речи. М., 1972, с. 68)